

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիբանանի
Հանրապետության կառավարության միջև զբոսաշրջության
բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Լիբանանի
Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,
ընդունելով Համաշխարհային զբոսաշրջության վերաբերյալ
Մանիլայի հռչակագրի /1980թ./ դրույթները և զբոսաշրջության
վերաբերյալ Հաագայի հռչակագրի /1989թ./ կարևոր սկզբունքները,
ելնելով երկու երկրների միջև բարեկամական
հարաբերություններն ամրապնդելու ցանկությունից, ինչպես նաև
նպաստելով Լիբանանի և Հայաստանի պատմամշակութային
Ժառանգությանն ավելի լավ ծանոթանալուն,
գիտակցելով զբոսաշրջության կարևորությունը որպես
փոխընթացման ամրապնդման, բարի կամքի արտահայտման և երկու
ազգերի միջև բարեկամական հարաբերությունները ամրապնդող
գործոն,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, սույն Համաձայնագրի և իրենց ազգային օրենսդրության
ու կանոնակարգերի համաձայն, կխրախուսեն զբոսաշրջության
բնագավառում համագործակցությունը փոխշահավետության և
իրավահավասարության հիման վրա:

Հոդված 2

Երկու Կողմերը կխրախուսեն համագործակցության զարգացումը
հայկական և լիբանանյան զբոսաշրջության ասոցիացիաների,
կազմակերպությունների, ձեռնարկությունների և ընկերությունների միջև:
Նրանք կխթանեն երկու երկրների զբոսաշրջության բնագավառում
կապիտալ ներդրումները:

Հոդված 3

Կողմերը ջանքեր կգործադրեն՝ պարզեցնելու երկու երկրներում զբոսաշրջիկների փոխանակման ժամանակ մաքսային և այլ ընթացակարգերը:

Հոդված 4

Կողմերը կնպաստեն զբոսաշրջության զարգացմանը, հատուկ մասնագիտացված խմբերի փոխանակմանը՝ զբոսաշրջության բնագավառում կայացած սպորտային իրադարձությունների, երաժշտական և թատերական փառատոների, ինչպես նաև ցուցահանդեսների, գիտաժողովների և վեհաժողովների անցկացման վրա ուշադրություն կենտրոնացնելու նպատակով:

Հոդված 5

Կողմերը կխրախուսեն և կաջակցեն զբոսաշրջության բնագավառում վիճակագրական տեղեկության փոխանակմանը, որը կվերաբերի.

- իրենց երկրներում զբոսաշրջային գործունեությունը կարգավորող օրենսդրությանը,

- բնամշակութային վայրերի՝ որպես զբոսաշրջային գրավչությունների պահպանումը և պաշտպանությունը կարգավորող ազգային օրենսդրության ապահովմանը,

- իրենց երկրներում զբոսաշրջային վայրերին,

- հյուրանոցային կառավարմանը և այլ զբոսաշրջային ենթակառուցվածքներին,

- ծանոթագրություններին և գովազդային նյութերին:

Հոդված 6

Կողմերը կջանան իրենց առկա ռեսուրսների շրջանակներում ապահովել զբոսաշրջության բնագավառում արհեստավարժ աշխատակազմի պատրաստումը, խրախուսել փորձագետների և լրագրողների փոխանակումը, խթանել հայկական և լիբանանյան զբոսաշրջային հետազոտություններ կազմակերպող կազմակերպությունների միջև բազմակողմ կապերը և համատեղ գործունեությունը:

Հոդված 7

Կողմերը կհամակարգեն իրենց ազգային զբոսաշրջային վարչական մարմինների համագործակցությունը՝ Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության (ՀՁԿ) և այլ միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների շրջանակներում:

Հոդված 8

Կողմերը մյուս Կողմի տարածքում կարող են բացել պաշտոնական զբոսաշրջային գրասենյակներ:

Այդ ներկայացուցչությունների հիմնադրումը և դրանց գործունեությունը կհամաձայնեցվի երկու երկրների պետական վարչական մարմինների հետ և կենթարկվի Կողմերի օրենսդրությանը:

Հոդված 9

Կձևավորվի համատեղ հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որի պարտականությունների մեջ կմտնի կատարել ուսումնասիրություններ և ձեռնարկել միջոցներ, որոնք կնպաստեն վերոհիշյալ նպատակների իրականացմանը:

Վերը նշված հանձնաժողովը պետք է նախագահեն երկու երկրների պատվիրակությունները, որոնք զբոսաշրջության պաշտոնական մարմնի կամ դրան փոխարինող մարմնի պատասխանատուներն են:

Հանձնաժողովը ապահովում է երկու երկրների բոլոր համապատասխան վարչակազմերի ներկայացուցիչների օժանդակությունը, եթե նիստի օրակարգում ընդգրկված նյութերը պահանջում են նման օժանդակություն:

Հոդված 10

Հանձնաժողովի հանդիպումը կկայանա առնվազն երկու տարին մեկ անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում կարող են անցկացվել համաձայնեցված արտակարգ հանդիպումներ երկու ազգային պատվիրակությունների նախագահների միջև:

Հանձնաժողովի հանդիպումները կկայանան հաջորդաբար երկու երկրներում՝ ազգային պատվիրակությունների նախագահների համաձայնությամբ նշանակված օրը:

Հանձնաժողովի նիստը կնախագահի այն երկրի պատվիրակության նախագահը, որտեղ տեղի է ունենում հանդիպումը:

Քարտուղարի պարտականությունները, ինչպես նաև հանդիպման հետ կապված ծախսերը կստանձնի այն երկրի պատվիրակությունը, որտեղ տեղի է ունենում հանդիպումը:

Հոդված 11

Հանձնաժողովի պաշտոնական լեզուն անգլերենն է կամ երկու նախագահների կողմից հաստատված ցանկացած այլ լեզու:

Հոդված 12

Հանձնաժողովը կհաստատի իր գործունեության ծրագիրն ու հարցերի դասակարգումն ըստ նախապատվության և կձեռնարկի քայլեր, որոնք կկիրառվեն երկու երկրների իրավասու մարմինների հաստատումից հետո:

Հոդված 13

Երկու ազգային պատվիրակությունների նախագահները կհետևեն ընդունված քայլերի կատարմանը, որպեսզի պատշաճորեն կիրառվեն Հանձնաժողովի որոշումներն ու բանաձևերը:

Հոդված 14

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար Կողմերի օրենսդրությամբ նախատեսվող բոլոր ներպետական ընթացակարգերը կատարելու մասին դիվանագիտական ուղիներով Կողմերի վերջին ծանուցման ստացման օրվանից:

Սույն Համաձայնագիրը գործում է մեկ տարի ժամկետով և կերկարաձգվի հետագա տարիների համար, քանի դեռ Կողմերից որևէ մեկը գրավոր չի հայտնել Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին ոչ ուշ, քան Համաձայնագրի գործողության հերթական ժամկետը լրանալուց 6 ամիս առաջ:

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չպետք է խոչընդոտի այն ծրագրերի ու նախագծերի իրականացմանը, որոնք նախատեսված են Համաձայնագրի շրջանակներում կնքված պայմանագրերով, քանի դեռ Կողմերը այլ բան չեն նախատեսել:

Կատարված է Բեյրութ քաղաքում 1998 թվականի սեպտեմբերի 16-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Մեկնաբանության ժամանակ տարածայնություններ առաջանալիս անգլերեն տեքստը կգերակայի:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի հոկտեմբերի 1-ից: